



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ՍԻՄՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

(Գանգաղ թիվ 18275/08)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

7 ապրիլի 2016թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



**Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետևյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝ Նախագահ,  
Լեդի Բիանկու [Ledi Bianku],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Ալեշ Պեյչալ [Aleš AlesPejchal],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo]՝ դատավորներ,

և Անդրե Ուամպաչ [André Wampach]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,  
2016 թվականի մարտի 15-ին դռնփակ խորհրդակցությամբ,  
կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Ռուբիկ Սիմոնյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության 2008 թվականի ապրիլի 10-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 18275/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երևանում գործող փաստաբան պրն Հ. Ալումյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն, մասնավորապես, պնդել է, որ Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի վճիռը բեկանելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ խախտվել է *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքը և գույքից անարգել օգտվելու իր իրավունքը:

4. 2010 թվականի հոկտեմբերի 20-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն:

**ՓԱՍՏԵՐԸ**

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1950 թվականին և ապրում է Երևանում: Նրան իր

մոր հետ համատեղ, սեփականության իրավունքով պատկանել է 223.9 քմ մակերեսով տուն և 770.3 քմ մակերեսով հողակտոր:

6. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն քաղաքացիական հայց է ներկայացրել մի քանի անհատների դեմ, որոնք, ըստ երևույթին, այդ տանը բնակվող նրա ազգականներն էին (այսուհետ՝ պատասխանողներ)՝ պահանջելով փոխհատուցման դիմաց դադարեցնել այդ տան մի մասի նկատմամբ բնակելի տարածության օգտագործման նրանց իրավունքը և վտարել նրանց: Դիմումատուի մայրը նույնպես համանման հայց է ներկայացրել:

7. 2006 թվականի օգոստոսի 24-ին պատասխանողները հակընդդեմ հայց են ներկայացրել՝ պահանջելով անվավեր ճանաչել սեփականության վկայականը և ճանաչել իրենց կողմից օգտագործվող տան մասի և հողակտորի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը՝ ձեռքբերման վաղեմության ուժով:

8. 2006 թվականի սեպտեմբերի 14-ին Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը մերժել է դիմումատուի ու նրա մոր հայցերը և բավարարել պատասխանողների հակընդդեմ հայցը:

9. Չհստակեցված ամսաթվին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել համայնքի դատարանի վճռի դեմ:

10. 2007 թվականի հունվարի 19-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը քննել է վերաքննիչ բողոքը և բավարարել դիմումատուի հայցն այն մասով, որը վերաբերում էր փոխհատուցման դիմաց պատասխանողների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելուն: Միևնույն ժամանակ այն մերժել է պատասխանողների հակընդդեմ հայցը:

11. Այդ վճիռն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և կարող էր վճռաբեկության կարգով բողոքարկվել, այն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

12. 2007 թվականի ապրիլի 24-ին պատասխանողներն այդ վճռի դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ պնդելով, որ այն ընդունվել է նյութական իրավունքի խախտմամբ: Իրենց բողոքն ընդունելու համար որպես հիմք՝ պատասխանողները, համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, նշել են, որ Վճռաբեկ դատարանի կողմից ընդունման ենթակա դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ նյութական իրավունքի խախտումը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

13. 2007 թվականի մայիսի 2-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է պատասխանողների բողոքը՝ ճանաչելով այն անընդունելի՝ անհիմն լինելու պատճառով: Ներկայացվել է հետևյալ պատճառաբանությունը.

«Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը, ... քննելով [Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի վճռի դեմ պատասխանողների կողմից ներկայացված բողոքն] ընդունելու հարցը, գտել է, որ այն պետք է վերադարձվի հետևյալ պատճառներով.

[ՔԴՕ-ի] 230-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է ներառի [ՔԴՕ-ի] 231.2-րդ հոդվածի 1-ին մասով [պահանջվող] հիմքերից որևէ մեկը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում բացակայում են [ՔԴՕ-ի] 231.2-րդ հոդվածի 1-ին մասով [պահանջվող]՝ ընդունելիության հիմքերը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը համարում է, որ գործի փաստական հանգամանքներում հնարավոր դատական սխալի և դրա հետևանքների վերաբերյալ վճռաբեկ բողոքում բերված փաստարկներն անհիմն են:»:

14. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և ենթակա չի եղել բողոքարկման:

15. 2007 թվականի հուլիսի 19-ին պատասխանողները Վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի վճռի դեմ մեկ այլ վճռաբեկ բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ պնդելով, որ տեղի են ունեցել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Իրենց առաջին վճռաբեկ բողոքում ներկայացված հիմքերից բացի պատասխանողներն իրենց բողոքն ընդունելու համար որպես հիմք նշել են, որ վիճարկվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում ընդունված դատական ակտին:

16. 2007 թվականի օգոստոսի 2-ին Վճռաբեկ դատարանը որոշել է բողոքը վարույթ ընդունել՝ գտնելով, որ այն համապատասխանում է ՔԴՕ-ի 230-րդ հոդվածի և 231.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

17. 2007 թվականի հոկտեմբերի 10-ին Վճռաբեկ դատարանը քննել է բողոքն ըստ էության և որոշել է բավարարել այն՝ բեկանելով Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի վճիռը և օրինական ուժի մեջ թողնելով Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը:

18. 2007 թվականի նոյեմբերի 15-ին տան 115.4 քմ մակերեսի և հողակտորի 387 քմ մակերեսի առնչությամբ պատասխանողների անունով սեփականության վկայական է տրվել:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Ներպետական օրենսդրության համապատասխան դրույթներին համառոտ ծանոթանալու համար տե՛ս *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի [Amirkhanyan v. Armenia]*, թիվ 22343/08, §§ 25-28, 2015 թվականի դեկտեմբերի 3:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

20. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ 2007 թվականի հունվարի 19-ի վճիռը բեկանելու որոշումը կայացվել է *res judicata* սկզբունքի խախտմամբ, և դրանով խախտվել է գույքից անարգել օգտվելու իր իրավունքը: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և թիվ 1 Արձանագրության

1-ին հոդվածի վրա, որոնք այնքանով, որքանով վերաբերելի են, ունեն հետևյալ բովանդակությունը.

#### **Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ**

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:»

#### **Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված**

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

### **Ա. Ընդունելիությունը**

21. Դատարանը նշում է, որ այս բողոքները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չեն: Այն այնուհետև նշում է, որ դրանք անընդունելի չեն որևէ այլ հիմքով: Հետևաբար, դրանք պետք է համարվեն ընդունելի:

### **Բ. Ըստ էության քննությունը**

22. Կառավարությունը պնդել է, որ վճիռները վերջնական լինելու սկզբունքի կամ դիմումատուի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի որևէ խախտում տեղի չի ունեցել, քանի որ տվյալ ժամանակահատվածում օրենքով թույլատրվում էր սահմանված ժամկետում մեկից ավելի վճռաբեկ բողոք ներկայացնել: Հետևաբար, երկրորդ բողոքն ընդունելու և վերաքննիչ դատարանի 2007 թվականի հունվարի 19-ի վճիռը բեկանելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը որևէ տեսանկյունից ոչ իրավաչափ չէր:

23. Դիմումատուն պնդել է, որ տվյալ ժամանակահատվածում օրենքով, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 231.1-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ արգելվում էր նույն գործով վճռաբեկ բողոք ներկայացնել ավելի քան մեկ անգամ, եթե բողոքում առկա թերությունները վերացնելու համար Վճռաբեկ դատարանի կողմից որևէ ժամկետ չէր սահմանվել: Այսպիսով, պատասխանողների կողմից ներկայացված երկրորդ բողոքն ընդունելով և այնուհետև 2007 թվականի հունվարի 19-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը բեկանելով՝ Վճռաբեկ դատարանը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և թիվ 1 Արձանագրության 1-ին

հողվածով սահմանված երաշխիքները:

24. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հողվածի 1-ին կետով երաշխավորված՝ իրավական որոշակիության սկզբունքով, *inter alia*, պահանջվում է, որ այն բոլոր դեպքերում, երբ դատարանները որևէ հարցի վերաբերյալ կայացնում են վերջնական դատական ակտ, այդ ակտը չպետք է կասկածի տակ դրվի (տե՛ս *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [*Brumărescu v. Romania* [GC]], թիվ 28342/95, § 61, ՄԻԵԴ 1999-VII և *Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի* [*Ryabykh v. Russia*], թիվ 52854/99, § 52, ՄԻԵԴ 2003-IX): Այնուհետև այն կրկին նշում է, որ դատարանի վերջնական վճիռը, որով ճանաչվում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, կարող է համարվել «գույք» թիվ 1 Արձանագրության 1-ին հողվածի իմաստով, և վերջնական դառնալուց ու այլևս բողոքարկման ենթակա չլինելուց հետո այդպիսի վճիռը բեկանելը միջամտություն կլինի վճռի շահառուի՝ այդ գույքից անարգել օգտվելու իրավունքի իրականացմանը (տե՛ս, վերը հիշատակված *Բրումարեսկուի* գործը, § 74 և *Ռյաբիխի* գործը, § 61):

25. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ ընդդեմ Հայաստանի բերված մեկ այլ գործով այն արդեն քննել է կողմերի ներկայացրած համանման բողոքներ և փաստարկներ և գտել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հողվածի 1-ին կետով և թիվ 1 Արձանագրության 1-ին հողվածով սահմանված երաշխիքների խախտում (տե՛ս վերը հիշատակված *Ամիրխանյանի* գործը, §§ 34-40 և §§ 46-48): 2007 թվականի հունվարի 19-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը Վճռաբեկ դատարանը բեկանել է համանման հանգամանքներում, ինչի հետևանքով խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը: Ավելին, այդ վճռով հաստատվել է տան և հողակտորի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը, ինչը չեղարկվել է բեկանման հետևանքով: Ուստի տեղի է ունեցել միջամտություն՝ իր գույքից անարգել օգտվելու դիմումատուի իրավունքին, ինչը չի եղել օրինական:

26. Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հողվածի 1-ին կետի և թիվ 1 Արձանագրության 1-ին հողվածի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

27. Կոնվենցիայի 41-րդ հողվածով նախատեսվում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի հատուցում տրամադրել:»:

### Ա. Վնասը

28. Դիմումատուն նյութական վնասի համար պահանջել է 30,510 եվրո, որը տան և հողակտորի այն մասի շուկայական արժեքն է, որից նա զրկվել էր

օրինական ուժի մեջ մտած վճռի բեկանման հետևանքով: Իր պահանջը հիմնավորելու նպատակով նա ներկայացրել է անշարժ գույքի գործակալության կողմից կատարված գնահատումը: Դիմումատուն նաև պահանջել է 3,000 եվրո՝ ոչ նյութական վնասի համար:

29. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն տվյալ գույքի սեփականատեր եղել է իր մոր հետ համատեղ: Ուստի նա կարող էր նյութական վնասի հատուցում պահանջել միայն գույքի կեսի համար: Նրա՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը ենթակա է մերժման, քանի որ ենթադրյալ խախտման և այդ վնասի միջև որևէ պատճառահետևանքային կապ առկա չէ:

30. Դատարանը գտնում է, որ սույն գործով այն հայտնաբերել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, քանի որ դիմումատուի օգտին կայացված վերջնական վճիռը բեկանվել է իրավական որոշակիության սկզբունքի խախտմամբ, և բեկանման հետևանքով դիմումատուն զրկվել է իր գույքի մի մասից: Որպես կանոն, Կոնվենցիայի 41-րդ հոդվածի շրջանակներում նախապատվությունը տրվում է *restitutio in integrum*-ին (մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում), քանի որ ակնկալվում է, որ պատասխանող Պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ խախտման հետևանքներն այնպես վերացնելու համար, որ հնարավորության սահմաններում վերականգնվի նախքան խախտումը եղած իրավիճակը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Պիերսակն ընդդեմ Բելգիայի* [*Piersack v. Belgium*] (Հոդված 50), 1984 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, Շարք «Ա» թիվ 85, § 12): Այն դեպքում, երբ բեկանվում է գույքի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ վերջնական վճիռը, խնդրո առարկա գույքը դիմումատուին վերադարձնելը հնարավորինս կհանգեցնի այն իրավիճակին, որում դիմումատուն հայտնված կլիներ, եթե չլիներ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Սակայն, որպես այլընտրանք, հնարավոր է նաև վճարել տվյալ պահի դրությամբ գույքի արժեքը՝ որպես նյութական վնասի հատուցում (տե՛ս *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Brumărescu v. Romania* (just satisfaction) [GC]], թիվ 28342/95, §§ 22-23, ՄԻԵԴ 2001-Ի):

31. Դատարանը նշում է, որ սույն գործում տվյալ գույքը վերադարձնելը կարող է անդրադառնալ երրորդ անձանց հակընդդեմ շահերի վրա (տե՛ս, ի հակադրություն, *Գլադիշևան ընդդեմ Ռուսաստանի* [*Gladysheva v. Russia*], թիվ 7097/10, § 106, 2011 թվականի դեկտեմբերի 6): Ավելին, դիմումատուն չի պահանջել նմանաբնույթ ռեստիտուցիա (տե՛ս, ի հակադրություն, *Բրումարեսկուն* [ՄՊ]՝ վերևում հիշատակված, § 10), այլ փոխարենը պահանջել է վճարել գույքի շուկայական արժեքը, ինչին կառավարությունը չի առարկել, և որը, ըստ նրա, կազմել է 30,510 եվրո: Ուստի Դատարանը հնարավոր է համարում սույն գործով դիմումատուին հատուցում հատկացնելը պատճառված նյութական վնասի դիմաց: Սակայն, ինչպես Կառավարության կողմից արդարացիորեն նշվել է, դիմումատուին սեփականության իրավունքով պատկանել է տվյալ գույքի միայն կեսը, իսկ մյուս կեսը պատկանել է նրա մորը, որը սույն գործով դիմումատու չի հանդիսանում: Ուստի, նյութական վնասի դիմաց պետք է տրամադրվի



պահանջվող գումարի միայն կեսը: Կառավարությունը չի վիճարկել դիմումատուի ներկայացրած գնահատումը, իսկ Դատարանը դրա ճշգրտությունը կասկածի տակ դնելու որևէ պատճառ չունի: Հետևաբար, այն որոշում է դիմումատուին շնորհել 15,255 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում: Դատարանը նաև որոշում է դիմումատուին հատկացնել 3,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

#### **Բ. Ծախսերը և ծախքերը**

32. Դիմումատուն ծախսերի և ծախքերի հատուցման պահանջ չի ներկայացրել:

#### **Գ. Ջկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

33. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային միավոր:

### **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝**

1. Հայտարարում է գանգատն ընդունելի:
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
4. Վճռում է, որ՝
  - ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող Պետության արժույթի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.
    - i) 15,255 եվրո (տասնհինգ հազար երկու հարյուր հիսունհինգ եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ՝ որպես նյութական վնասի հատուցում,
    - ii) 3,000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում,
    - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պարզ տոկոսադրույք պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ՝

չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության համար առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր:

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2016 թվականի ապրիլի 7-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Անդրե Ուամպա՝  
Քարտուղարի տեղակալ

Միրյանա Լազարովա Տրայկովսկա՝  
Նախագահ